Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 21.11.2017թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սարիբեկյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մաթևոսյան / գնահատող /
Ն. Մարտիրոսյան / բացող /
Ն. Մանուկյան / բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր
հանձնաժողովի անդամ՝ Ա.Քոչարյան /գնահատող/

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Մ.Սարիբեկյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) 2017 թվականի նոյեմբերի 9-ին N ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ հնարավոր մասնակից կազմակերպության կողմից ներկայացվել է հարցում, որի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կողմից 2017 թվականի նոյեմբերի 10-ին տրվել է պարզաբանում՝ մասնավորապես

- հայտի ապահովումը պետք է ներկայացվի բանկային երաշխիքի տեսքով.
- հայտի ապահովման համար ներկայացված բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար հանդես է գալիս ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն.

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի նոյեմբերի 17-ին, ժամը 11:00-ին.

գ) գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 165 364 930 (մեկ հարյուր վաթսունհինգ միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար ինը հարյուր երեսուն) ՀՀ դրամ.

դ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ	104 000 000	26 000 000	130 000 000
2	<<ԱՌՎԱ-ԵՐԿԻՐ>> ՍՊԸ	114 700 000	22 940 000	137 640 000
3	<<Վահրադյան Շին>> ՍՊԸ	117 500 000	23 500 000	141 000 000

4	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ	120 981 475	24 196 295	145 177 770
5	<<Բաղրամյանշին>> ԲԲԸ	121 902 675	24 380 535	146 283 210
6	<<Բիդեք>> ՍՊԸ	122 720 178	24 544 036	147 264 214
7	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ	124 750 000	24 950 000	149 700 000
8	<<Ռեմ Գրուպ>> ՍՊԸ	124 870 775	24 974 155	149 844 930
9	<<Ագաթ-777>> ՍՊԸ	131 600 000	26 320 000	157 920 000
10	<<Ղարիբյանշին>> ՍՊԸ	132 727 900	26 545 580	159 273 480

ե) ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել հայտերի արդյունքների ամփոփմանը հաջորդող աշխատանքային օրը.

1.2 Հայտերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

ա) <<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ

- գնային առաջարկում առկա է թվաբանական անճշտություն (ԱԱՀ-ի հաշվարկը սխալ է կատարվել).

- հրավերով սահմանված բանկային երաշխիքի փոխարեն ներկայացվել է հայտի ապահովում.

բ) <<ԱՌՎԱ-ԵՐԿԻՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ

- բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի փոխարեն նշվել է ՀՀ ֆինանսների նախարարությունը.

- բանկային երաշխիքի վավերականության ժամկետը չի համապատասխանում հրավերով սահմանված ժամկետին (90 աշխատանքային օր).

գ) <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, քանի որ բանկային երաշխիքի վավերականության ժամկետը չի համապատասխանում հրավերով սահմանված ժամկետին (90 աշխատանքային օր).

դ) <<Բաղրամյանշին>> ԲԲԸ-ի հայտը մերժել, քանի որ

- բանկային երաշխիքում որպես բենեֆիցիար ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի փոխարեն նշվել է ՀՀ ֆինանսների նախարարությունը.

- երաշխիքի գումարի տառերի և թվերի միջև առկա է անհամապատասխանություն.

ե) <<Բիդեք>> ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ լիազորագրով ստորագրելու իրավասություն լիազորելու փաստաթուղթը ստորագրվել է ավելի ուշ, քան հրավերով պահանջվող մնացած փաստաթղթերը, այսինքն՝ վերջիններս ստորագրվել են դեռևս ստորագրելու իրավասություն չունեցող անձի կողմից:

զ) <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի և <<Ագաթ-777>> ՍՊԸ-ի հայտերը մերժել, քանի որ բանկային երաշխիքներում որպես բենեֆիցիար ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի փոխարեն նշվել է ՀՀ ֆինանսների նախարարությունը.

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Մ.Սարիբեկյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ	բավարար
2	<<Ռեմ Գրուպ>> ՍՊԸ	բավարար
3	<<Ղարիբյանշին>> ՍՊԸ	բավարար
4	<<Վահրադյան Շին>> ՍՊԸ	անբավարար
4	<<Ագաթ-777>> ՍՊԸ	անբավարար
4	<<ԱՌՎԱ-ԵՐԿԻՐ>> ՍՊԸ	անբավարար
4	<<Զեթ-Պրոֆիլ>> ՍՊԸ	անբավարար
4	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ	անբավարար
4	<<Բաղրամյանշին>> ԲԲԸ	անբավարար
4	<<Բիդեք>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Մ.Սարիբեկյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

4. ՀՀՔՊԿ-ՀԲՄԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Սարիբեկյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից պատասխանը ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2017 թվականի նոյեմբերի 27-ը ժամը 10:30-ն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Սարիբեկյան

Անդամ՝ ---------- Ս. Մաթևոսյան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան